# ԴԱՍԸՆԹԱՑ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Կազմակերպություն <<Կանթեղ>> 2023թ.

ԹԵՄԱ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ 11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

ԱՌԱՐԿԱ՝ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԱԼԱ ՄԻՐԶՈՅԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ **ՄԱՐԻՆԵ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ <<ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

1. Ներածություն
2. 1878թ.՝ Սան-Ստեֆանոյի պայմանագիր և Բեռլինի վեհաժողով:
3. 1914թ.Ա. Մանդելշտամի բարենորոգումների ծրագիր, 1914թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիր
4. 1919-1920թթ.՝ 1918թ. Բաթումի պայմանագիր,1919թ. Փարիզի վեհաժողով, 1920թ. Սևրի պայմանագիր
5. 1921-1923թթ.՝ 1921 Լոնդոնի կոնֆերանս,1922-23թթ. Լոզանի կոնֆերանս
6. 1945-94թթ.՝ 1945թ Պոտսդամի կոնֆերանս
7. Եզրակացություն
8. Գրականություն
9. Հավելված

> «Քանի դեռ Հայկական հարցը լուծված չէ, այն շարունակ, ինչպես դամոկլյան սուր, կճոճվի Թուրքիայի գլխավերևում, մինչև վերջապես ասիական Թուրքիայի համար կդառնա նույնը, ինչ Հունական կամ Բուլղարական հարցն էր եղել եվրոպական Թուրքիայի համար»:
>
> գերմանացի հոգևորական և հասարակական գործիչ

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իմ ուսումնասիրության նյութն է Հայկական հարցի միջազգայնացման շրջանի պատմական փուլերի ուսուցումը վարժությունների և սեմինարպարապմունքների օգնությամբ:

Հայկական հարցը մի կնճռոտ խնդիր է, որն մի դարաշրջան է կազմում Հայաստանի պատմության մեջ և խոր հետք է թողել հայ ժողովրդի հասարակական կեցության, գործունեության ու աշխարհընկալման վրա:

«Հայկական հարց» ասելով հասկանում ենք հայ ժողովրդի քաղաքական պատմության խնդիրների այն ամբողջականությունը, որոնք կապված են նրա պետականության վերականգնման և իր բնօրրանում ազգային համախմբման ձգտման հետ:

Հանրակրթական միջնակարգ դպրոցի ընդհանուր հոսքի և ավագ դպրոցի հումանիտար հոսքի համար նախատեսված է <<Հայկական հարցի պատմություն>> դասընթացը, որի նպատակն է օգնել սովորողներին համակողմանիորեն ուսումնասիրելու հայոց ազգային հիմնախնդիրներից մեկի՝ Հայկական հարցի պատմությունը: Լայն առումով, Հայկական հարցը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարն է՝ հանուն իր պատմական հայրենիքում ազգային պետականության վերականգնման, հանուն ազատ, անկախ և միացյալ Հայաստան կերտելու նվիրական նպատակի: Հայկական հարցի ակունքները հասնում են մինչև

հայոց պետականության կորուստը, այսինքն համընկնում են այն ժամանակաշրջանին, երբ հայ ժողովուրդը կորցրեց իր թագավորությունները 1045թ. բուն հայոց հողի վրա Բագրատունյաց թագավորության անկումը և 1375թ. Կիլիկյան հայոց պետության անկումը: Կիլիկիայի հայկական թագավորության անկումով հայ ժողովուրդը կորցրեց ազատության այդ փոքրիկ կղզյակը ևս:

Հայկական հարցի արմատը կամ առանցքը Թուրքիայի տակ գտնվող արևմտյան Հայաստաններ ու արևմտահայությունը; Սակայն իր վերջնական բովանդակությամբ Հայկական հարցն Արևմտյան և Արևելյան Հայաստանների ազատագրման և միավորման խնդիրն էր; Հայկական հարցն տարբեր պատմական ժամանակաշրջաններում տարբեր բովանդակություն է ունեցել:

Հայկական հարցն սկզբում ազատագրական պայքարի նշանակություն է ունեցել, երբ հայ նշանավոր գործիչները ձգտել են հայ ժողովրդին ազատել օտար տիրապետությունից՝ սուլթանական Թուրքիայի և խանական Պարսկաստանի լծից: Սկզբում հանդես էին գալիս հայոց կաթողիկոսները՝ 1547թ Ստեփանոս Սալմաստեցի, 1562թ. Միքայել Սեբաստացի, Աբգար դպիր, ովքեր մեկնում էին Եվրոպա օգնության խնդրանքով, սակայն այդ քայլերը արդյունք չէին տալիս; Հայաստանը ազատագրելու համար իր գործունեությունը ծավալեց Իսրայել Օրին, ով Եվրոպայում երկար դեգերելուց հետո մեկնեց Ռուսաստան և ռուսական ցար Պետրոս Մեծից օգնություն խնդրեց Հայաստանը Թուրքիայի և Պարսկաստանի լծից ազատագրելու համար: Իսրայել Օրին դրեց հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների հիմքը, կողմնորոշելով ազատության համար դեպի Ռուսաստան: Այնուհետև ազատագրության իր գաղափարներով ու ծրագրերով հանդես է գալիս Հովսեփ Էմինը, Մադրասի հայրենասիրական խմբակը Շահամիր Շահամիրյանի գլխավորությամբ: Այս էտապում հայկական հարցի բովանդակությունը պարսկա-թուրքական տիրապետությունից Հայաստանի ազատագրության հարցն էր;

Որպես միջազգային հարաբերությունների և դիվանագիտության առարկա Հայկական հարցը ձևավորվել է XIXդարի 2-րդ կեսին և կազմել Արևելյան հարցի, որը տևական ժամանակ եվրոպական դիվանագիտության ուշադրության կենտրոնում գտնվող միջազգային հարաբերությունների բարդ հանգույց էր, բաղկացուցիչ մասը:Այդ առումով Հայկական հարցը նախ և առաջ արևմտահայերի վիճակի և ճակատագրի հարցն է, ովքեր գտնվելով Օսմանյան կայսրության տիրապետության տակ, ենթարկվել են սոցիալական ու քաղաքական դաժան ճնշման, ազգային ու կրոնական հալածանքների:

Պատմական հանգամանքների բերումով՝ հայ ժողովուրդը դարձավ համաշխարհային պատմության մեջ առաջին անգամ սանձազերծված ցեղասպանության զոհ: Ցեղասպա-նություն, որը կանխամտածված էր, պետականորեն ծրագրված և իրականացված Օսմանյան Թուրքիայում 1915-1923 թվականներին: Հայկական հարցը, նեղ առումով, 1878 թվականի Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերով ծնունդ առած ու միջազգային դիվանագիտության սեղանին դրված, Օսմանյան կայսրության հայկական նահանգներում անցկացվելիք բարենորոգումների, հայերի անձի, գույքի պատվի ապահովության ու պաշտպանության հարցն էր:

Միջազգային դիվանագիտության առարկա դառնալուց ի վեր տարբեր երկրների ու կառավարությունների կողմից հաճախեն անտեսվել հայ ժողովրդի պատմական-ազգա-յին իրավունքները: Ավելին՝ հայ ժողովուրդը իր բնօրրանում՝ ենթարկվեց ցեղասպա-նության: Այդ պահից Հայկական հարցի լուծման համար պայքարը ձեռք է բերել հստակ բովանդակություն՝ ճանաչում և փոխհատուցում: Հայաստանում, Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը շարունակվում է և սերունդների գործն է տրամաբանական ավարտին հասցնել այդ պայքարը: Հետևաբար, կարևոր է Հայկական հարցի պատմու-թյան ուսուցանումը Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցների բարձր դասարաններում:

Դա հնարավորություն է տալիս մեր մատաղ սերնդին դաստիարակելու մարդու և ժողովուրդների բնական իրավունքները հարգելու և մաքուր ու անկեղծ հայրենասիրու-թյան ոգով:

Նպաստում է հայոց պատմության հիմնախնդիրների հիմնավոր յուրացմանը:

Ամբողջացնում է սովորողների աշխարհայացքն ու արժեքային համակարգը և նրանք կպատրաստվեն ինքնուրույն կյանք մտնելու:

## 1878Թ.՝ ՍԱՆ-ՍՏԵՖԱՆՈՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ և ԲԵՌԼԻՆԻ ՎԵՀԱԺՈՂՈՎ:

Հայկական հարցը Օսմանյան կայսրության տիրապետությունից Արևմտյան Հայաս-տանի ազատագրման, հայ ժողովրդի ինքնորոշման ու սեփական պետականության վերականգնման, հայ ժողովրդի համախմբման և այդ նպատակներին հասնելու համար հայ ժողովրդի մղված ազգային-ազատագրական պայքարի անվանումն է դիվանագիտության պատմության մեջ: Ըստ խորհրդահայ պատմագրության՝ Հայկական հարցը ասպարեզ է իջել որպես Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս 1877-1878թթ. ռուս-թուրքական պատե-րազմից հետո: Ըստ հայկական ազգային պատմագրության՝ Հայկական հարցն առաջացել է այն ժամանակ, երբ Հայ ժողովուրդը զրկվել է իր Հայրենիք Հայաստանում սեփական ազգային, անկախ, միացյալ և ամբողջական պետականություն ունենալու հնարավորու-թյունից: Այդ տեսակետի կողմնակիցներն են մասնավորապես պատմաբաններ Լեոն, Լենդրուշխուրշուդյանը, Մնացական Խաչատրյանը և շատուրիշներ:

Հայկական հարցն Արևելյան հարցին առնչվում էր Օսմանյան կայսրության հետ Ռուսական կայսրության փոխհարաբերությունների միջոցով: Արևելյան և Հայկական հարցերը XIX դարի ընթացքում և XX դարի առաջին տասնամյակներին գտնվում էին միջազգային քաղաքականության կիզակետում: 1877-78-թթ. ռուս-թուրքական պատերազմը ոտքի հանեց հայժողովրդին, որը մեծ հույսեր էր կապում ռուսական զենքի հաղթանակի հետ, և ինչը օբյեկտիվորեն համընկնում էր թուրքական լծից հայժողովրդիազատագրության կենսական շահերին: ՊատերազմնավարտվեցՌուսաստանի հաղթանակով: 1878-ի փետրվարի 19-ին Սան–Ստեֆանո բնակավայրում 1877-78թթ ռուս-թուրքական պատերազմից հաղթանակով դուրս եկածցարական Ռուսաստանը պարտված Թուրքիայի հետ կնքեց Սան-Ստեֆանոյի պայմանագիրը:

Սան Ստեֆանոյի պայմանագր
իստորագրումը



**1878** թվականի փետրվարի **19-**ին կնքված Սան-Ստեֆանոյի պայմանագրում արծարծվեց նաև XIX դարի երկրորդկեսի հայ հասարակական-քաղաքական կյանքի հիմնականբովանդակությունը կազմող Հայկական հարցը: Պայմանագիրըստորագրվել է Ռուսաստանի կողմից կոմս Ն. Իգնատևի ու Ա.Նելիդովի, Թուրքիայի կողմից՝ Սավֆետ փաշայի ու Սահադուլլահ բեյի կողմից: Արևմտահայ շատ գործիչներ՝ հոգևորականներ, հայոց Ազգային ժողովի երեսփոխաններ, այդ թվում ժողովի ատենապետ Ստեփան փաշա Ասլանյանը, Սաֆվեթ փաշայի խորհրդական, դիվանագետ Սարգիս Համամջյանը,-

Հայկական հարցի լուծման ակնկալությամբ հանդիպումներ ունեցան Սան-Ստեֆանոյի- ռուսական պատվիրակության ղեկավար կոմս Ն. Իգնատևի հետ: Սան Ստեֆանոյի պայմանագրում մտցվեցին առանձին հոդվածներ ու ձևակերպումներ, որոնք վերաբերում էին Հայաստանին ու հայերին: Հայերին էրվերաբերում 16-րդ, 25-րդ, 27-րդ հոդվածները

Կնքվեց հաշտության նախնական պայմանագիր, որի 16-րդ հոդվածով Օսմանյան կայսրությունը պարտավորվում էր բարեփոխումներ անցկացնել հայաբնակ վայրերում: 16-րդ

հողվածի առավելությունն այն էր, որ Ռուսաստանը հանդես էր գալիս իբրև հայ ժողովրդի պաշտոնական հովանավոր, իսկ Արևմտյան Հայաստանի զգալի մասի միացումը Ռուսաստանին հայերին ազգային համախմբության, տնտեսական և մշակութային զարգացման հնարավորություն էր տալիս:

- Բարձր դուռը պարտավորվում էր Արևմտյան Հայաստանում ռուսների գրավված և կրկին Թուրքիային վերադարձվելիք տարածքներում անհապաղ բարեփոխումներ անցկացնել և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից: (16-րդ)
- Ռուսական զորքերին իրավունք էր տրվում 6 ամիս ժամկետով մնալ Հայաստանում: (25-րդ)
- Թուրքական կառավարությունը պարտավորվում էր չհալածել պատերազմում ռուսներին աջակցած քրիստոնյաներին: (27-րդ)

Պայմանագրի համաձայն.՝

- Ռուսաստանին էին անցնում Կարսի, Կաղզվանի, Օլթիի, Արդահանի, Ալաշկերտի և Բայազետի գավառները, Սևծովի առափնյա շրջանները՝ Բաթում նավահանգստով
- Օսմանյան կայսրության տիրապետության տակ էին նշարունակում մնալ Էրզրումն- ու Բասենը:

Սակայն պայմանագիրը կնքվեց միջազգային լարված պայմաններում, Ռուսաստանին հակադրվեց անգլո-ավստրիական անուժեղ դաշինքը:

Մեծ Բրիտանիան և Ավստրո-Հունգարիան նախաձեռնեց ինհրավիրել միջազգային նոր համաժողով, որի նպատակն էր խոչընդոտել Ռուսաստանին օգտվելու իր հաղթանակի պտուղներից:



Բեռլինի կոնգրեսի (1878) հրավիրման նախօրեին Մկրտիչ Խրիմյանի գլխավորությամբ Եվրոպա ուղարկվեց հայ ազգային պատվիրակությունը՝ հօգուտ Հայկական Հարցի լուծման ,բանակցություններ վարելու եվրոպական պետությունների կառավարությունների հետ: Չստանալով իրական երաշխիքներ՝ հայ ազգային պատվիրակությունը, այնուամենայնիվ, մեկնեց Բեռլին ,սակայն նրան չթույլատրվեց մասնակցել կոնգրեսի նիստերին:

Բեռլինի կոնգրեսում Սան Ստեֆանոյի պայմանագրի վերանայման հետևանքով, արևմտաեվրոպական դիվանագիտությանը հաջողվեց Ռուսաստանին զրկել Հայկական Հարցում նրա ունեցած մենաշնորհից: Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերի համապատասխանաբար 16-րդ և 61-րդ հոդվածներով սկզբնավորվեց Հայկական հարցի դիվանագիտա-կան պատմությունը, ինչպես նաև հասարա-քաղաքական կյանքում եվրոպական դիվանագիտու-թյան օգնության թուրքական լուծըթոթափելու, հայերի անկախությունն ու ինքնավարությունը ձեռքբերելու մտայնությունն ու գործելակերպը, որը շարունակվեցմինչև Առաջին համաշխար-հային պատերազմն ու նրանից հետո: Եթե Սան Ստեֆանոյի պայմանագիրը հույսեր էր ծնում, թեբազմաչարչար հայկական հարցը վերջապես իր լուծումը կստանա, ապա հայտնի Բեռլինի վեհաժողովը եկավ փաստելու, որ համաշխարհային քաղաքականության մեջ գոյություն չունի արդարություն հասկացությունը, այնտեղ իշխում է միայն սեփական շահի սառը հաշվարկը: Հայ պատվիրակությունը Բեռլինից վերադարձավ հուսախաբ: Մկրտիչ Խրիմյանն զգաց, որ աղերսաթղթերը և խնդրագրերը չեն կարող օգնել հայությանը, որ ժողովուրդը կարող է փրկվել միայն պայքարով:

Այս դասանյութը ուսումնասիրելիս աշակերտները շեշտը դնում են Հայկական հարցի միջազգայնացման վրա, նշում, որ այդ հարցը գոյություն ուներ վաղուց, բայց ճանաչվեց ու արծարծվեց Սան Ստեֆանոյում ու Բեռլինում: Թեմանուսուցվում է տարբեր մեթոդների ու հնարների օնությամբ, ամրապնդվում՝ վարժությունների միջոցով: Աշակերտը համոզվում է, որ աշխարհի դիվանագիտական-քաղաքական վեհաժողովներում չլուծվեցայդ հարցը, սակայն հայժողովուրդը մի դաս քաղեց, որ խտանում էԽրիմյան Հայրիկի Երկաթե շերեփի անալոգիայի մեջ: Օրինակ՝

1. Օսմանյան կայսրությունը ուժեղ պահելու համար, Անգլիան բարենորոգումներ էր պարտադրում սուլթանին, որպեսզի
   ա) Մեկ այլ պետություն չկարողանա տիրանալ նեղուցներին և Անգլիայի առջև Հնդկաստան իճանապարհը փակել:
   բ) հայերի դժգոհությունները առիթ չտանայլ մեծ պետություններին՝ կայսրու-թյունը քայքայելու:
2. Բեռլինի վեհաժողովում Սան Ստեֆանոյի պայմանագիր ըվերանայման անթարկվեց՝
   ա) Հայկական բարենորոգումների գործադրում ըարագացնելու համար:
   բ) Օսմանյան կայսրության մեջՌուսաստանի ազդեցության առաջն առնելու համար:
3. Ֆրանսիան բազմիցս հայերի շահերը պաշտպան եցկայսրության մեջ, որովհետև՝
   ա) Ցանկանում էր իր մշակութային ազդեցությունը պահպանել:
   բ) Կայսրության ուժեղացումն ու հարատևումը նպատակն էին նրա համար:
4. Եվրոպական պետությունների միջամտությունը ի շահ հայերի՝

ա) Սուլթանի մեջ կասկած առաջացրին, և նա ավելի ու ավել իխստացրեց հալածանքը:

բ) Սուլթանին պարտադրեցին բարենորոգումներ կատարել ևհայերի կյանքը կայսրության մեջ բարելավել:

**1-ա, 2-բ , 3-բ , 4-ա**

## 1914Թ.Ա. ՄԱՆԴԵԼՇՏԱՄԻ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ, 1914Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ՌՈՒՍ- ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

1878թ Հայկական հարցը դարձավ միջազգային դիվանագիտության հարց, որը վերաբերում էր թուրքիայի տիրապետության տակ գտնվող արևմտյան Հայաստանին և արևմտահայերին `բարենորոգումներ անցկացնելու և ինքնավարություն տալու խնդիրներին:




1895 թ-ի մայիսի 11-ին Կոստանդնուպոլսում Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանները օսմանյան անկառավարությանը ներկայացրին հայկական Վան,Էրզրում,Բիթլիս, Դիարբեքիր,Սվաս և Խարբերդ նահանգներումբարենորոգումների չափավոր ծրագիր, որըկոչվեց Մայիսյան: Չնայած սուլթանական կառավարությունընդունեց այդ ծրագիրը, բայց չիրագործեց: Ավելին՝ 1908թ-ին երիտթուրքական հեղաշըր-ջումից հետո, կայսրությաննորաթուխ ղեկավարությունը որդեգրեց նույն՝պանթուրքիզմի ծրագիրը, և 1909 թ-ի ապրիլին իրագործեցկիլիկիահայության (հատկապես՝ Ադանայի) կոտորածը, որին զոհգնացավելի քան 30 հզ. մարդ:

1912-1913 թթ. Բալկանյան պատերազմներում Օսմանյան Թուրքիայի կրած պարտությունը քաղաքական աշխուժությունն է

իրավիճակից՝ հայերը որոշում են մեծ տերությունների ուշադրությունը հրավիրել հայկական վիլայեթներում բարենորոգումներ իրականացնելու վրա:

1912թ. հոկտեմբերի 2-ին կաթողիկոս Գևորգ V-ը պաշտոնապես դիմում է Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին՝ խնդրելով հարց բարձրացնել ցարի առջև Բեռլինի 61-րդ հոդվածը իրականացնելու համար: Մեկ ամիս անց կաթողիկոսը եգիպտահայ նշանավոր քաղաքական և հասարակական գործիչ Պողոս Նուբար փաշային լիազորում է մեծ տերություններին ներկայացնել հայկական բարենորոգումների խնդիրը:

Հայկական հարցի վերաբացումից անհանգստացած՝ թուրքական կառավարությունը կազմում է բարենորոգումների մի ծրագիր: Դրանով նախատեսվում էր բարենորոգումներ կատարել հայկական վեց վիլայեթներից (Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Տրապիզոն, Էրզրում և Սեբաստիա) միայն չորսում:

Իրենց հերթին արևմտահայերը կազմում են բարենորոգումների իրականացման սեփական ծրագիրը: Այն նախատեսում էր վեց վիլայեթները միավորել մեկ երկրամասի մեջ, որը պետք է գլխավորեր գերագույն կոմիսարը կամ գեներալ-նահանգապետը:

Հայկական բարենորոգումների իրականացման վերահսկողությունը դրվում էր մեծ տերությունների վրա: Ռուսաստանը պետք է հետևեր դրանց իրագործմանը:

1912թ. վերջին և 1913թ. սկզբին ռուսական, անգլիական և ֆրանսիական կառավարությունները համաձայնության են գալիս Օսմանյան Թուրքիայի հայկական վիլայեթներում բարենորոգումների նախագիծ կազմելու: 1913թ. հունիսի 4-ին Կ.Պոլսի ռուսական դեսպանատան աշխատակից Անդրեյ Մանդելշտամը ներկայացնում է բարենորոգումների իրականացման ռուսական տարբերակը.

1. Այն նախատեսում էր հայկական վեց վիլայեթներից կազմել մեկ նահանգ:
2. Նահանգը ղեկավարվելու էր թուրքահպատակ քրիստոնյայի կամ եվրոպացի գեներալ-նահանգապետի կողմից: Նա իրականացնելու էր գործադիր իշխանությունը:
3. Գեներալ-նահանգապետին էին ենթարկվելու ոստիկանական և զինվորական ուժերը:
4. Օրենսդիր մարմինը կազմվելու էր տեղի մահմեդական և քրիստոնյա բնակչությունից:
5. Առաջարկվում էր վերացնել «համիդիե» գնդերը:
6. Պաշտոնական լեզուն լինելու էր թուրքերենը: Զուգահեռաբար թույլ էր տրվում օգտագործել հայերենը և քրդերենը:
7. Բարենորոգումների հսկողությունն իրականացնելու էին մեծ տերությունները:

Ռուսական կողմի ներկայացրած բարենորոգումների ծրագիրը հանդիպում է հատկապես Գերմանիայի առարկությանը: Վերջինս ձգտում էր թույլ չտալ, որպեսզի Թուրքիայում ուժեղանան Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դիրքերը: Օսմանյան կառավարությունը, ստանալով գերմանացիների և ավստրիացիների աջակցությունը,

հայկական վիլայեթներում բարենորոգումների ծրագիր ընձախողելու միտումով զանազան խոչընդոտներ էհարուցում:

1913թ. հոկտեմբերի 10-ին օսմանյան կառավարությունը պաշտոնապես տեղեկացնում է ռուսական կողմին, որ ինքը պատրաստ է իրագործել հայկական վիլայեթներում բարենորոգումների ներկայացրած ծրագիրը:

1914թ. հունվարի 26-ին կնքվում է ռուս-թուրքական համաձայնագիր Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացնելու վերաբերյալ: Այն նախատեսում էր Արևմտյան Հայաստանը բաժանել երկու նահանգի: Առաջին նահանգի մեջ մտնելու էին Էրզրումի, Տրապիզոնի և Սեբաստիայի, իսկ երկրորդի մեջ՝ Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի և Խարբերդի վիլայեթները: Նահանգապետերի թեկնածությունն առաջադրելու էին եվրոպացիները, իսկ հաստատելու է րսուլթանը: Նահանգապետերի ենթակայության ներքո է ինգտնվելու վարչական, դատական և ոստիկանական իշխանությունները: Նահանգներում պաշտոնական գրագրությունը կատարվելու էր տեղի ժողովուրդների լեզուներով (հայերեն, քրդերեն և թուրքերեն):

Նահանգապետերն ունենալու էին զինված ուժեր, որոնք պետք է հետևեին նահանգների ներքին կարգ ու կանոնին: Հայերին արտոնվում էր մահմեդականների նման զենք կրել: Նահանգների վարչական խորհուրդները կազմվելու էին հավասարթվով մահմեդականներից ու քրիստոնյաներից: Նույն սկզբունքը պետք է կիրառվեր ոստիկանական և այլ պաշտոններ բաշխելիս: Հայկական դպրոցների պահպանման ծախսերն իր վրա էր վերցնում Օսմանյան պետությունը:

1914թ. գարնանը Արևմտյան Հայաստանի նահանգապետեր են նշանակվում հոլանդա-ցի դիվանագետ Լ. Վեստենենկը և
նորվեգացի գնդապետ Ն. Հոֆը: Նրանք նոր էին անցել իրենց պարտականությունների կատարմանը, երբ բռնկվեց Առաջին
համաշխարհային պատերազմը: Հայկական բարենորոգումներն այդպես էլ չիրականացան:

Այս թեման դասապրոցեսում հիմնականում ուսումնասիրում ենք համագործակցային մեթոդով: Դասարանը բաժանվում է խմբերի և աշխատում են տրված հանձնարարու-թյամբ, որը և դասիավարտին հանձնարարվում է, որպես քննարկման նյութ:

## 1918-1920ԹԹ.՝ 1918Թ.

## ԲԱԹՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, 1919Թ. ՓԱՐԻԶԻ ՎԵՀԱԺՈՂՈՎ, 1920Թ. ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

1918թ
Մայիսյան փառահեղ հերոսամարտերի՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի ճակատամարտերով ծնվեց Հայաստանի առաջին հանրապետությունը;Այս հերոսամարտերի շնորհիվ բնաջնջումից փրկվեց արևելահայությունը, ինչպես նաև Մեծեղեռնից մազապուրծ հարյուր հազարավոր արևմտահայեր;**1918**թ հունիսի **4**-ին Բաթումում կնքվեց պայմանագիր Օսմանյան Թուրքիայի և ՀՀ-ի միջև, որով Թուրքիան առաջին ընճանաչում էր Հայաստանի անկախությունը, որին մնում էր 12. հազ քառ
,

կմ տարածք; Առանց մի թիզ հող զիջելու թուրքական կառավարությունը համաձայնվել էր ընդունել Հայաստանի գոյությունը; Թուրքիայի համար լուծված էր Հայկական հարցը ;Բաթումի պայմանագիրը իր ուժը պահպանեց մինչև 1-ին աշխարհամարտի ավարտը 1918թ նոյեմբերը;
1-ին աշխարհամարտը ավարտվե ցՔառյակ դաշինքի պարտությամբ և1918թ հոկտեմբերին Մուդրոսի զինադադարով Թուրքիան ընդունեց իր պարտությունը և դուրս եկավ պատերազմից; **1919**թ հունվարին Փարիզում բացվե ցխաղաղության կոնֆերանս, որտեղ հաղթանակած ԱՆՏ ԱՆՏ Ի երկերները/ Անգլիա, ֆրանսիա Իտալիա/ պետք էհաշտության պայմանագիր կնքեին պարտվածՔառյակ միության երկրների, այդ թվում՝և Թուրքիայի հետ: ԱՆՏ ԱՆՏ Ի երկրների

<< փոքր դաշնակից էր>> համարվում Հայաստանը, որովհետև նա մասնակցություն էր ունեցել պատերազմին և կրել էր վիթխարի կորուստներ;

Փարիզի վեհաժողով մեկնեց ՀՀ պատ-

վիրակությունը Ավետիս Ահարոնյանի


ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ
ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ ԵՒ ՀԻՄՆԱԴԻՐ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

նախագահությամբ:

Ավելի վաղ դեռ 1912թ Փարիզում էր գտնվ ումարևմտահայ պատվիրակու-

թյունը եգիպտահայ մեծահարուստ Պողոս Նուբար փաշայի գլխավորու-թյամբ;

Հայկական երկու պատվիրակու-թյունները սկզբում գործում էին պառակտված: Վերջապես երկար վեճերից հետոկողմերը որոշեցին միացյալպատվիրակության պատվո նախագահ ճանաչել Պողոս Նուբարին
և Միացյալ Հայաստանի /ներառյալ Կիլիկիան/ պահանջը ներկայացրեցին 1919թ փետրվարին:
Միացյալ Հայաստանի գաղափարի իրականացման համար շատ կարևոր էր Հայկական մանդատի հարցը, հույս էր տածվ ում որ այն կստանձնի ԱՄՆ-ը: 1920թ մայիսին ԱՄՆ-ի Սենատը մերժեց Հայաստանի մանդատը վերցնելու Վիլսոնի առաջարկը:

Նախագահ Վուդրո Վիլսոնը շատ էր հետաքրքրվում Հայաստանով, նույնիսկ կազմեց
մ
Միացյալ Հայաստանի սահմանների վերաբերյալ քարտեզ և 1920թ նոյեմբերին ներկայացրեց Հայաստանի սահմանների վերաբերյալ իր առաջարկը, բայց այդ ժամանակ արդեն գնում էր թուրք-հայկական պատերազմը:




ՍԵՐ՝Ի ՊԱՅՄԱՆԱԳԻՐ՝Ը համարվում է հայկական հարցի լուծման գագաթն, սակայն մեկ անգամ ևս Հայկական հարցը լուծվում է միայն թղթի վրա;

1920թ օգոստոսի 10-ին փարիզի Սևր կոչվող արվարձանում Անտանտի երկրները Թուրքիայի հետ կնքեցին հաշտության պայմանագիր; Հայստանի կողմից պայմանագիրը ստորագրեց Հանրապետության դեկավար Ավետիս Ահարոնյանը:

Նա այդ օրը համարել է իր կյանքի ամենաերջանիկ օրը: Սևրի պայմանագրի <<բաժին 6-րդ>> թիվ 88-93 հոդվածները վերաբերում էին Հայաստանին: Թուրքիան պարտավորվում էր ճանաչել Միացյալ Հայաստանը, որին էին անցնելու Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգները ելքով դեպի Սև ծով, ՀՀ-ի տարածքը կազմելու էր 160 հազար քառակուսի կիլոմետր: Ցավոք Սևրի պայմանագիրը չիրագործվեց և իրադարձությունների հետագա ընթացքը աննպաստ զարգացում ստացավ;

Առաջին աշխարհամարտում պարտված Թուրքիայում սկսվել էր / միլլի/ ազգայնական շարժում, որը ղեկավարում էր գեներալ Մուստաֆա Քեմալը: Քեմալական շարժման նպատակն էր պայքարել ԱՆՏԱՆՏԻ երկրների դեմ՝ պահպանելու Թուրքիայի տարածքային ամբողջականությունը: Քեմալականները չճանաչեցին սուլթանական Թուրքիայի ստորագրած Սևրի պայմանագիրը, իսկ Հայաստանի դաշնակից համարվող պետությունները՝ Ֆրանսիան, Անգլիան, Իտալիան աստիճանաբար մոռացության մատնեցին իրենց իսկ ստորագրած պայմանագիրը;

Այս թեման ուսումնասիրելիս աշակերտները խորը գիտելիքներ են ձեռք բերում միջազգային հարաբերությունների ոլորտում Հայկական հարցի, Հայաստանի աշխարհաքաղաքական իրավիճակի մասին: Ուսումնասիրում են իրարամերժ ուժերի հստեղծած





ազդեցությունների բարդ ցանցը և այդ ցանցում Հայաստանի դիրքը: Դասանյութի յուրաց-մանը ուղղված վարժությունները միտված են ստուգելու աշակերտների գիտելիքները, կարողություններն ու հմտությունները. Օրինակ ՝Ամբողջացնել տրված նախադասությունները.

1. Հայ ժողովուրդը Առաջին աշխարհամարտում կռվել էր դաշնակիցների կողքին և հույս ուներ,որ

2. 1918թ.Ֆրանսիան Կիլիկիայում հայերի------------------------և հայկական ----------

Կազմած նրանց հետմիասին -------------------------

3. Ամերիկացի ժողովուրդը թերթերում հայերի ջարդերի մասին կարդալով ու ,շնորհիվ........................................................................... կարծիք էր կազմել հայերի մասին:

4. Մուդրոսի զինադադարի ստորագրումից հետո ,Փարիզում գումարվեց ---------------

............................: Փարիզում ներկա էին նաև........................................................ ------

5. Հաշտության վեհաժողովի ընթացքը երկար եղավ: Փոխվեցին ....................................

..........................................................ԱՄՆ-ը .......................................................................

Անգլիան և Ֆրանսիան պատճառաբանում էին, -------------------- -----------

----------------------------: Իսկ այդ ընթացքում Թուրքիայում -------------

......................,

որ Հայաստանի ......................................................................................................... -

Ժամանակագրության յուրացմանը մեծապես օգնում է հետևյալ ալվարժությունը.

1. Ամերիկայի սենատը մերժեց Հայաստանի հովանավորություն ընդունելու Վուդրո Վիլսոնի առաջարկը --------1920թ. 28/5
2. Հայոց եկեղեցու պատվիրակությունները դաշնակիցներին ներկացրին Հայաստանի պահանջները --- 1919թ.2/2
3. Փարիզում գումարվեց հաղթող պետություններիհաշտության վեհաժողովը 1919թ. 1
4. Վուդրո Վիլսոնը ներկայացրեց Հայաստանի համար իր գծածսահմանների նախագիծը ---- 1920թ.22/11
5. Աբետիս Ահարոնյանը Հայաստանի կողմից ստորագրեց Սևրիդաշնագիրը 1920.10.8
6. Դաշնակիցները ճանաչեցին Հայաստանի փաստական անանկախությունը -1920թ. 28/5

**1921-1923ԹԹ.՝ 1921 ԼՈՆԴՈՆԻ ԿՈՆՖԵՐԱՆՍ, 1922-23ԹԹ. ԼՈԶԱՆԻ ԿՈՆՖԵՐԱՆՍ**

Եթե Մոսկվայի պայմանագրով Խորհրդային Ռուսաստանը քեմալական Թուրքիային զիջեց հայկական տարածքները ու հարված հասցրեց հայկական հարցին, ապա Լոնդոնի և Լոզանի կոնֆերանսներ ըվերջնականապես տապալեցին հայկական հարցը;

Լոնդոնի կոնֆերանսը կայացավ **1921**թ թեետրվար -մարտ ամիսներին, որտեղ քննարկման դրվեցՍևրիպայմանագրի վերանայման հարցը; Լոնդոն էին ժամանել երկու հայկական պատվիրակություն և պահանջում էին Արևմտյան Հայաստանի նկատմամբ կենսագործել Սևրի պայմանագիրը, իսկԿիլիկիայում ստեղծել ինքնավարություն;Սևրի մերժումից հետո առաջ քաշվեց Թուրքիայի արևելյան նահանգներում <<հայկական ազգային օջախ>> ստեղծելու խնդիրը, որը սակայն Թուրքիային ոչինչ չէր պարտավորեցնում;

**1922-23**թթ կայացած Լոզանի միջազգային կոնֆերանսը նվիրված էր Մերձավոր Արևելքի հարցերի քննարկմանը;Ընդունված փաստաթղթերից էր Թուրքիայի հետ դաշնակից երկրների հաշտության պայմանագիրը, որը ներկայացնում էր Թուրքիայի ժամանակակից սահմանները; Այդ նշանակում էր, որ վերջ էր դրվում Սևրի պայմանագրին և արևմտյան տերությունների կողմից Հայկական հարցի ճանաչմանը;
Լոզանում էին կրկին հայկական երկու պատվիրակություն; Լոզանում խոսք էր գնում Թուրքիայի տարածքում հայ գաղթականներին կենտրոնացնելու և <<ազգային օջախ>> ստեղծելու մասին;որը սակայն մերժվեց;

Այսպիսով Անգլիայի, Ֆրանսիայի և խորհրդային Ռուսաստանի վարած քաղաքականությամբ տապալվեց հայկական հարցը ի հաշիվ քեմալական Թուրքիայի: Լոզանի կոնֆերանսում Խորհրդային միությունը պաշտպանեց Թուրքիայի շահերը;

Հայկական հարցը Սևրի պայմանագրից` ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ դարձավ գաղթականների հարց

: Լոզանի պայմանագրերում Հայաստանըև հայերը այլևս չէին հիշատակվում ;Հայկական հարցի փոխարենառաջ քաշվեց հայ գաղթականների հարց, այն հանձնելով Ազգերի Լիգայի տնօրինությանը ;
Թուրքիան խստորեն մերժեց իր երկրում /արևելաանատոլիական մասում/ <<հայկական ազգային օջախ>> կազմակերպելու խնդիրը; Ճիշտ է ազգային օջախի ստեղծումը հայկական հարցի հետ նույնական չէր, բայց կունենար դրական նշանակություն; Ցեղասպանության ենթարկված ու հայրենազրկված, արևմտահայու-թյանը համախմբելու իր հայրենիքում, և ունենալիետագա պայքարի հեռանկար:

Մեծ տերությունների անտարբեր վերաբերմունքի քննադատությամբ հանդես եկավ մեծ մարդասեր ու հումանիստ Ազգերի Լիգայի ներկայացուցիչ Նորվեգացի բևեռախույզ Ֆրիտյոֆ Նանսենը իր

<<Խաբված ժողովուրդ>> գրքով; Նանսենի աշխատանքով հայ գաղթականները հայրենազուրկ հայ տարարվեցին ,դա որոշ արտոնություններ էր տալիս նրանց

միջազգային տեղափոխությունը դյուրացնելու համար;

Նրանց տրվեց հատուկ անցագիր, որը <<Նանսենյան

անձնագիր >> կոչվեց; 1925թ Նանսենի ղեկավարածԱզգերի Լիգայի հանձնախումբը եկավ Հայաստան Սարդարապատի դաշտի ոռոգման հնարավորությունները ուսումնասիրելու և դրամական միջոցներ հավաքելու համար; Նախատեսված էր 50հազ. գաղթականների տեղավորման խնդիրը,սակայն այս ջանքերն էլ ապարդյուն անցանև սպասված արդյունքչ տվեցին:

Այդպես, Առաջին համաշխարհային պատերազմից (1914–18 թթ.)հետո Օսմանյան կայսրության փլուզմամբ, Արևելյան հարցը ստացավ իր լուծումը, սակայն Հայկական հարցը տակավին մնաց




և մնում էչլուծված:
Այս և մյուս թեման ուսումնասիրելիս օգտագործում եմ ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից մեթոդներ ,վարժություններ և առավել ապես`քննարկումներ:

**1945-94ԹԹ.`** **1945Թ** ՊՈՏՍԴԱՄԻ ԿՈՆՖԵՐԱՆՍ

Երկրորդ համաշխարհային պատերազմի (1939-1945 թթ.) ավարտին նկատելիորեն ուժեղացավ սփյուռքահայերի շարժումը` Թուրքիային անցած Արևմտյան Հայաստանի տարածքը Խորհրդային Հայաստանին միացնելու համար: Սփյուռքահայ կազմակերպու-թյուններն ու գործիչներն այդ պահանջով դիմեցին հաղթող տերությունների ղեկավար-ներին, ՄԱԿ-ի Սան Ֆրանցիսկոյի կոնֆերանսին (1945 թ.-ի ապրիլ), երեք դաշնակից տերությունների ղեկավարների Բեռլինի կոնֆերանսին (1945 թ.-ի օգոստոս), արտաքին գործերի նախարարների խորհրդի Լոնդոնի նստաշրջանին (1945-ի սեպտեմբեր), երեք տերությունների արտաքին գործերի նախարարների Մոսկվայի

խորհրդակցության (1945 թ. դեկտեմբեր), ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի Լոնդոնի 1-ին նստաշրջանին (1946 թ. հունվար)։ 1945 թ. նոյեմբեր 29-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Զ դիմեց ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի ղեկավարներին՝ պահանջելով Խորհրդային Հայաստանին միացնել Արևմտյան

Հայաստանը։ 1945 թ. մարտին խորհրդային կառավարությունը, ելնելով երկրորդ աշխարհամարտից հետո ստեղծված միջազգային նոր իրադրությունից, հայտարարեց 1925 թ.-ի խորհրդա-թուրքական պայմանագիրը չեղյալ հայտարարելու իր մտադրության մասին։ 1945 թ.-ի հունիսին Մոսկվայում տեղի ունեցան խորհրդա-թուր-քական բանակցություններ՝ ԽՍՀՄ-իև Թուրքիայի միջև հարաբերությունները կարգավո-րելու շուրջ, որը պայմանավորված էր խորհրդային կառավարության կողմից իբրև ժամանակի ոգուն չհամապատասխանող և արմատական անբարեյավման կարիք ունեցող 1925 թ. պայմանագիրը չեղյալ հայտարարելու հետ: Թուրքական կողմն առաջարկեց կնքել դաշնակցային պայմանագիր: Դրան խորհրդային կողմը պատասխանեց, որ դեմ չէ որոշակի պայմաններով այդպիսի պայմանագիր կնքելուն, մասնավորապես, եթե Թուրքիան վերադարձնի 1921 թ. Խորհրդային Հայաստանից խլված Կարսը և Արդահանը: Սակայն դաշնակցային պայմանագիրը Թուրքիայի հետ չկնքվեց: Երեք դաշնակից տերությունների (ԽՍՀՄ, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա) ղեկավարների 1945 թ. Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսում, ի թիվս այլ հարցերի, լսվեց նաև Հայկական հարցը, սակայն հայկական տարածքների վերադարձի հարցը խաղարկվում և ընկալվում էր որպես ներգաղթ: 1953 թ. մայիսի 30-ին խորհրդային կառավարությունը, անտեսելով հայ ժողովրդի ականկալիքներն ու ձգտումները, Թուրքիայի

կառավարությանը հայտարարեց, որ

Հանուն բարիդրացիական հարաբերությունների և խաղաղության ու անվտանգության պահպանման
կառավարությունները հնարավոր գտան հրաժարվել Թուրքիայի նկատմամբ պահանջներից...:

Այդպիսով, խորհրդային կառավարությունը հայտարարում է, որ Խորհրդային Միությունը տարածքային ոչ մի պահանջ չունի Թուրքիայից: ԽՍՀՄ-ի նման հակահայկական դիրքը հաստատվել է հետագայում ևս՝ միջազգային մի շարք փաստաթղթերում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթության գլխավոր նպատակը երեխաների,

սովորողների մտավոր, հոգևոր,

ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ներդաշնակ զարգացումն է, նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի

ձևավորումը:

Երկար տարիներ հանրակրթական դպրոցի տասներորդ, իսկայժմ տասնմեկերորդ դասարաններում պարապելով «Յայկական հարցի պատմություն» առարկան, ուսումնա-սիրելով տարբեր սկզբնաղբյուրներ ու հետազոտական աշխատանքներ, եկել եմ այն եզրահանգման, որ Յայկական հարցը մնացել է «ճայնբ արբ առոյան ապատի»:

Պարզ ճշմարտություն է, որ Յայկական հարցի և Յայոց Մեծեղեռնի նկատմամբ գոյություն ունեն քաղաքական շահագրգռվածություններով պարուրված և դրանքանտեսելու միտումներ: Ուստի հանրակրթական դպրոցի ավագ դասարաններում անհրաժեշտություն է «Յայկական հարցի պատմություն» առարկայի ուսումնասիրությունը տրվի ոչ թե ԿԳ նախարարության օրինակելի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչից, այլ դպրոցական պարտադիր բաղադրիչում մատնանշված ժամաքանակով:

Սովորողները ուսումնասիրելով դասընթացը համոզվում են, որ Յայկական հարցը պատմական մի այնպիսի հիմնահարց է, որը վերաբերվում է համայն մարդկությանը, և ոչ թե միայն մեր ժողովրդին:

Դասընթացը սովորողներին դաստիարակում է մարդու և ժողովրդի բնական իրավունքների պաշտպանության, ցեղասպանության երևույթի անվերապահ դատապարտման և անկաշառ հայրենասիրության ոգով:



Ես համոզված եմ, ինչպես այս փարոսն է լուսավորում ծովագնացների, նավաստիների ու նավերի ճանապարհը մութ ու մռայլ գիշերներին, այնպես էլ ժամանակը կլուսավորի և կլուծի Հայկական հարցը:

ՃԱՆԱՉՈՒՄ և ՓՈԽՅԱՏՈՒՑՈՒՄ...

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Լեո՝ Հայոց հարցը - 1906թ.
2. Խուրշուդյան Լենդրուշ՝ Հայկական հարցը, Երևան -1995թ.
3. Կիրակոսյան Ջոն՝ Հայկական Սովետական Հանրագիտարան
4. Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան -1981
5. Հայկական հարց Հանրագիտարան, Երևան - 1996թ.
6. Հարությունյան Ա. «Սևրի պայմանագիրը և հայհասարակական — քաղաքական միտքը»,2004թ.

7. Փիրումյան Ռ.՝ Հայկական հարցի պատմություն
8. Փիրումյան Ռ.՝ Հայկական հարցի պատմություն, ուսուցչի մեթոդական ձեռնարկ Երևան -2002թ. Էդիթ Պրինտ

## ՊԱՏԿԵՐԱՑԱՆԿ

1. Հարությունյան Բ.Հ.՝ Քարտեզներ. Հայկական հարցը 1912-1914թթ Հայաստանը ըստ Սևրի Պայմանագրի
2. Վուդրո Վիլսոնի քարտեզը՝ The New Armenia Publishing Company - "Asia: Journal of the American Asiatic Association"
3. Բեռլինի վեհաժողով՝ Anton von Werner - First uploaded to de.wikipedia. by de:Benutzer:APPER
4. Պոդսդամի կոնֆերանս՝ անհայտ or not provided translate - U.S. National Archives and Records Administration
5. Խոհմյան Հայրիկ՝ S. Soghomonyan - http://peopleofar.files.wordpress.com/2012/02/armpc74a.jpg

## ԱՐևՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ

Վիլայեթ՝ նահանգ

գՍանջակ՝ գավառ

Լեո՝

## ՀԱՎԵԼՎԱԾ

Հայոց հարցը նույնքան հին է, որքան ինքը՝ հայ ազգը:
Հայ ովհարցը, ինչպես գիտեք ամենքդ, հայ ժողովրդի ազգային գոյության հարցն է:

Հայոց հարցի պատմությունը հայ ազգի պատմությունն է, սկզբից մինչև մեր օրերը:

Հայոց հարցի վավերագրերը

Բեռլինի կոնգրեսից հետո, որտեղ հայ ժողովրդի հույսերը չարդարացան, Գարեգին Սրվանձտյանն ասել է.

Հայաստանի մէջ է բուն հայկական խնդիրը, և Պերլինի մէջ կորոնենք զայն:

**1879** թվականին Րաֆֆին գրել է.

Արևմտահայերը «նախապատրաստված չէին ժամանակից մեծ օգուտ քաղելու և այս պատճառով չհասան իրենց նպատակին, թեև ոմանք Բեռլինի վճռի **61-րդ** հոդվածի մեջ ոսկու հանք են տեսնում: Տաճկաստահայոց խնդիրը պետք է կայանար այսուհետև անդադար և անընդհատ նախապատրաստության գործի մեջ, որպեսզի նրանք կազմ ու պատրաստ հանդիպեն այն մեծ օրվան, երբ կրկին կզարկե ազատության ժամը»:

Գալուստ Գալոյան՝

Թուրքիայի և Պարսկաստնի ութամյա պատերազմն ավարտվեց ***1555*թ.** Ամասիայի պայմանագրով: Այդ օրերից իսկ Հայկական հարցը դարձավ արևմտյան խոխոշոր տերությունների դիվանագիտական մեքենայությունների առարկա:

Պատմության քառուղիներում

Գերսամ Ահարոնյան՝

Առանց մանրամասնության մեջ մտնելու, պետք է նշել, թե «հայկական հարցը» ծնունդ առավ այն օրը, երբ կորսնցուցինք մեր ազատությունը, մեր պետական անկախությունը՝ **1236**թ., երբ մոնղոլ հորդաները ջնջեցին Զաքարյանի իշխանությունը: Այդ շրջաններում էր, որ ծագեցավ մեր հարցը - Հայ ազատ պետականության վերականգնումը՝ Հայոց հայրենիքի պատմական սահմաններու մեջ:

Մեծ Երազ ճամբուն վրայ

Ջոն Կիրակոսյան՝

Հայկական հարց. թուրքական լծից արևմտահայության ազատագրման, հայ ժողովրդի ինքնորոշման ու սեփական պետության ստեղծելու համար մղված պայքարի անվանումը դիվանագիտության պատմության մեջ:

Հայկական Սովետական Հանրագիտարան, հատոր **6**

Արման Կիրակոսյան՝

Հայկական հարցը հայ ժողովրդի քաղաքական պատմության պրոբլեմների համակարգ է, կապված իր պատմական տերիտորիայում անկախ պետականության վերականգնման ձգտումների հետ՝ ազգային կոնսոլիդացիայով և այդ նպատակների իրականացմանն ուղղված ազգային — ազատագրական պայքարով: հայկական հարցը ծագումը կանխորոշ- ված էր Հայաստանի ազգային պետականության կորուստով: